ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/45

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով՝ Լևոն Թադևոսյանի 22.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **Լևոն Թադևոսյան ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Լևոն Թադևոսյանը 22.03.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար 26.02.2018թ. Վանաձոր համայնքում մետաղական աղբարկղների պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/38 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ ընթացակարգ): Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 05.03.2018թ.: Պատվիրատուն նշել է, որ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ է համարվում մետաղական աղբարկղների պատրաստման աշխատանքների կատարված լինելը, իսկ հաղթող ճանաչված «Արաքս 3» ՍՊԸ-ի ներկայացրած նախկինում կատարված պայմանագրի առարկան է՝ պաշտպանիչ ցանցի ամրացման մետաղական դետալները:

Այդ պատճառով գտնում եմ, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր «Արաքս 3» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, քանի որ իր կողմից

ներկայացված պայմանագիրը չի համարվում նմանատիպ ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/38 ծածկագրով մրցույթի համար:

Գտնում եմ, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը Խորհրդին ներկայացրած բողոքով խնդրել է.

Չեղյալ համարել «Արաքս 3» ՍՊԸ-ին արձանագրություն 2-ով հաղթող ճանաչված լինելու որոշումը և կասեցնել 2018թ. մարտի 16-ի թիվ 3 արձանագրությամբ «Արաքս 3» ՍՊԸ-ի հետ պայմանագիչ կնքելու որոշումը:

Ի լրումն 22.03.2018թ. ներկայացրած բողոքի Լևոն Թադևոսյանը 09.04.2018թ. բողոքի պահանջը փոխոխել է և շարադրել հետյալ խմբագրությամբ՝

«Չեղյալ համարել «Արաքս 3» ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող ճանաչելու մասին որոշումը:»:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Լևոն Թադևոսյանը:

2. <u>Վանաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Խորհուրդը դիմել է Վանաձորի համայնքապետարանին բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Վանաձորի համայնքապետարանը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն համայնքապետարանի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

<u>3. ԳԲԽ-ԷՍ-2018/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է Լևոն Թադևոսյանի (այսուհետ նաև՝ Ա/Ձ) կողմից 22.03.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/38 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/38 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 07.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը, «Արաքս 3» ՍՊԸ-ի և «Ագրունտեքս » ՍՊԸ-ի միջև 06.07.2017թ. կնքված մատակարարման թիվ 2 և Ա/Ձ Ավագ Ավագյանի և «Արաքս 3» ՍՊԸ-ի միջև 01.09.2016թ. ծառայությունների մատուցման թիվ 7 պայմանագրերը.

Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար՝ Վանաձոր համայնքում մետաղական աղբարկղների պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/38 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Լևոն Թադևոսյանը Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/38 ծածկագրով ընթացակարգի իմաստով նմանատիպ է համարվում մետաղական աղբարկղների պատրաստման աշխատանքների կատարված լինելը, իսկ հաղթող ճանաչված «Արաքս 3» ՍՊԸ-ի ներկայացրած նախկինում կատարված պայմանագրի առարկան է՝ պաշտպանիչ ցանցի ամրացման մետաղական դետալները:

ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/38 ծածկագրով ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մետաղական աղբարկղների պատրաստման աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

«Արաքս 3» ՍՊԸ-ն «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստելու նպատակով ներկայացրել է՝

- «Արաքս 3» ՍՊԸ-ի և «Ագրունտեքս» ՍՊԸ-ի միջև 06.07.2017թ. կնքված մատակարարման թիվ 2 պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ մատակարարը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով մատակարարել պաշտպանիչ ցանցի ամրացման դետալներ 250 կոմպլեկտ քանակությամբ ըստ Գնորդի կոմից տրամադրված տեխնիկական տվյալների:
- Ա/Ձ Ավագ Ավագյանի և «Արաքս 3» ՍՊԸ-ի միջև 01.09.2016թ. ծառայությունների մատուցման թիվ 7 պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ նույն պայմանագրի համաձայն Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջարկով կատարել խառատային և էլ.

եռակցման միջոցով պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 61-րդ կետի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.
- 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման

համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ընթացակարգի Հրավերի՝

- 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:
- 8.2 կետի համաձայն հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 18/38 ծածկագրով ընթացակարգի գնման առարկա է հանդիսանում՝ Վանաձոր համայնքում մետաղական աղբարկղների պատրաստման աշխատանքների ձեռքբերումը, իսկ Ընթացակարգի հրավերի 2.5 կետով սահմանվել է, որ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մետաղական աղբարկղների պատրաստման աշխատանքների կատարված լինելը:

Խորհուրդն արձանագրում է, նաև որ «Արաքս 3» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը նույն ընթացակարգի իմաստով չեն կարող համարվել նմանատիպ, քանի որ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մետաղական աղբարկղների պատրաստման աշխատանքների կատարված լինելը, սակայն Արաքս 3» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արաքս 3» ՍՊԸ-ի և «Ագրունտեքս» ՍՊԸ-ի միջև 06.07.2017թ. կնքված մատակարարման թիվ 2 պայմանագրի առարկան է հանդիսանում «պաշտպանիչ ցանցի ամրացման դետալներ» ապրանքի մատակարարումը, իսկ «Արաքս 3» ՍՊԸ-ի և Ա/Ձ Ավագ Ավագյանի միջև 01.09.2016թ. կնքված ծառայությունների մատուցման

թիվ 7 պայմանագրի առարկան է հանդիսանում «խառատային և էլ. եռակցման միջոցով» պայմանագրի 1.2 կետում նշված ծառայության մատուցումը:

Խորհուրդը գնում է, որ Հանձնաժողովը՝ «Արաքս 3» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին համապատասխան գնահատելով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Լևոն Թադևոսյանի 22.03.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:
2. Չեղյալ համարել «Արաքս 3» ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**